

ԱԿԱԳԵՄԻՈՍ Մ. Ն. ՏԻՒՈՄԻՐՈՎԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՆՆԱ ԶԻՍՏԱԿՈՎԱ (Մոսկվա)

Միխայիլ Նիկոլայի Տիխոմիրովն այցելել է Սովետական Միության զրեթե բոլոր հանրապետությունները, կիսելով ՍՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը, նա հանդես է եկել գիտական և ուսումնական աշխատանքի կազմակերպման պրոբլեմների մասին ղեկուցումներով, անց է կացրել գիտական և հոբելյանական սեսիաներ, օգնել է պատմության, պատմագրության, ազբյուրագիտության և հնագիտության գծով ակադեմիական հաստատությունների ինստիտուտների աշխատանքներին, ղեկավարել է դիսերտացիաներ, կոնսուլտացիաներ է տվել, մենագրությունների մասին կարծիքներ ու գրախոսականներ է գրել և այլն։ Այդ ամբողջ բաղադրողների դործունեությունը նպաստակ է հետապնդել ծառայել սովետական պատմական գիտությանը, նպաստել տեղերում նրա զարգացմանը, աջակցել աղգային շրջաններում կադրերի պատրաստմանը։ Մ. Տիխոմիրովը մեծ ուշադրություն է դարձրել այնպիսի պրոբլեմների, ինչպիսիք են ուսու ժողովրդի հետ բաղադրողների կապերի զարգացումը, Ռուսաստանի կազմի մեջ ժողովուրդների մանելու պրոցեսի ուսումնասիրումը։ Դրանում հատուկ տեղ էր գրաւում Հայաստանը, որտեղ Մ. Տիխոմիրովը բաղմիցս եղել է։ Մ. Տիխոմիրովին գրաւում էր այդ լեռնային երկրամասի խիստ ղեղեցկությունը, ժողովրդի աշխատասիրությունը և նրա պատմական ճակատագրի դրամատիզմը, նրա գրաւվոր մշակույթի խոր արմատները, ավանդույթներն ու ներկան։ Մ. Տիխոմիրովը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում այդ հանրապետության պատմության, աղբյուրների ու գրականության ուսումնասիրության և դրանց մասին գիտելիքների տարածման նկատմամբ։

Իր աշխատություններում նա ցույց էր տալիս հայկական աղբյուրների նշանակությունը ոչ միայն Հայաստանի ու Ռուսաստանի, այլև մեր երկրի մյուս ժողովուրդների և նույնիսկ արտասահմանյան պետությունների պատմության ուսումնասիրության ասպարեզում։ Այսպես, իմանալով Երևանում պատրաստվող փաստաթղթերի ժողովածուի մասին, Մ. Տիխոմիրովը 1954 թ. մարտի 5-ին Վ. Կ. Ոսկանյանին ուղղված նամակում գրել է. «Ուկրաինայի պատմության մասին նյութերի հրատարակության ժամանակ գլխավոր ուշադրությունը դարձրել են ուսական, ուկրաինական և լեհական փաստաթղթերի վրա։ Ընդ որում, մոռացել են այն մասին, որ Ուկրաինայում (հատկապես Լվովում) եղել են հայկական մեծ գաղութներ։ Այդ իսկ պատճառով ծայրահեղ անտաքքրական են նաև հայկական աղբյուրները։ Ժամանակագրությունների և հուշագրությունների հրատարակությունը շատ ուրախալի գործ է։ Ընդհանրապես գիտությունը շատ նոր բան կարող է սպասել հենց հայկական աղբյուրներից։ Հաղվագրուտ ժողովուրդ է ունեցել այնպիսի ընդարձակ միջազգային կապեր, ինչպես հայերը»¹ :

1. Խաչիկյանին Մ. Տիխոմիրովի ուղղած յոթ նամակների պատճենները, Մ. Տիխոմիրովի «նաշտոցի գերեզմանի մոտ» րանստեղծության և 1954 թ. Վ. Ոսկանյանին նրա գրած նամակի բնագրերը սիրալիր մեղ տրամադրելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում Լ. Խաչիկյանի գտնելը՝ Շուշանիկ Խաչիկյանին։ Այդ նյութերից արված բաղվածքները տրված են տերատում։ ՏԵՍ նաև Լ. Խաչիկյան, Վ. Ոսկանյան, Մ. Ն. Տիխոմիրով («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 290—292)։

Հետազոտելով ուսական պատմության պրոբլեմները, Մ. Տիխոմիրովը հաճախ է օգտագործել Հայաստանի պատմության մասին աղբյուրները կամ տվյալները: Այսպես, իր «Հին ուսական քաղաքները» մենագրության մեջ նա գրել է. «Պեշոյան վարք սրբոցը» գունագեղ պատմում է հայերի, ասորիների, հրեաների, լատինների (կաթոլիկների) հետ պեշոյան վանականների վեճերի մասին: «Անվճար բժիշկ» Ագապիտի մասին գրույցը պատմում է հայ բժշկի («ծնունդով և հավատով հայ, բժշկելու մեջ հնարամիտ») ու նրա հավատակիցների և, հետևաբար, ամբողջ հայկական գաղութի մասին: Հայ բժիշկը լինում էր ամենաբարձր ֆեոդալական շրջաններում և բուժում էր վլադիմիր Մոնոմախին ու բոլարներին»²: Խոսելով այն մասին, որ «Գերիմաստուն Ակիրի մասին գրույցը» կամ «Արքայազն Հովսեփի մասին գրույցը» լայն տարածում ունենր Ռուսիայում, Մ. Տիխոմիրովն ապացուցել է, որ այն «ղանաղան տարբերակներով հայտնի էր հայերեն, ասորերեն և արաբերեն լեզուներով»³: Դեռևս «Հին Մոսկվան» մենագրության առաջին հրատարակության մեջ նա գրել է: Հայաստանի հետ Ռուսիայի ամուր տնտեսական կապերի մասին: Այդ գրքեր կրկնորդ հրատարակության մեջ «Հայերը» հատուկ բաժնում (գլուխ 8) հեղինակը մանրամասն պատմում է մայրաքաղաքում հայկական բնակավայրերի մասին. «Կովկասի ժողովուրդների շարքում ուսական տարբերությունները հիշատակում են նաև հայերին»: Նա այնուհետև գրում է, որ հայերը Մոսկվայում բնակվում էին Կիտայ գործողում՝ հնագույն վարվարկա (այժմ Ռազինի) փողոցում, որը ոլորապատույտ գծով Կարմիր հրապարակից ձգվում էր մինչև Կլյինսկու դառարանները (այժմ Նոդինի հրապարակ): Հայերը լինում էին նաև Աստրախանում և հիանալի էին յուրացրել վոլգյան առևտրական ուղին: Կանգ առնելով վանահայր Իգումենին (Սերպուխովոյից) մետրոպոլիտ Աֆոնասի վիսոցկու սոված պատասխանների վրա, Մ. Տիխոմիրովը եզրակացրել է. «Շարքային ուս մարդիկ արդարացիորեն մեծ տարբերություններ չէին զգում ուղղափառության և հայոց դավանանքի միջև: Հաճույքով շփվում և խոսափմանը էին տնում հայերի հետ, նրանց թողնում էին իրենց եկեղեցիները, բարեկամանում և ամուսնանում էին նրանց հետ, որն առաջ էր բերում եկեղեցական շրջանների ասեկությունը»⁴:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից քիչ հետո գիտնականը ձեռնամուխ եղավ ծանոթանալու հայկական ձեռագրերի մեծագույն պահոցի՝ Մատենադարանի ֆոնդերին: Մատենադարանում նրան ամեն ինչ դուր էր գալիս: Իր հոգիվածներից մեկում նա գրել է. «Գրչության հարստությունների պահպանության նպատակով նոր շենքեր են կառուցվել մի շարք միութենական հանրապետությունների մայրաքաղաքներում (Երևանում, Տաշքենդում և մի քանի այլում): Երևանում Մատենադարանի գեղեցիկ շենքն արդեն այժմ դեպի իրեն է գրավում մեծաքանակ տուրիստների: Բայց, դժբախտաբար, ամենուր չէ, որ բարենպաստ պայմաններ են ստեղծված աղբյուրների պահպանման համար»: Մ. Տիխոմիրովը ոչ միայն հիանում էր ձեռագրերի պահպանման ալիք տաճարի արտաքին տեսքով և հրճվում դրանց պահպանման համար ստեղծված պայմաններով, այլև ընգծում էր գրչության ավանդույթի հնությունը և Մատենադարանի մեծագույն ժողովածուի լիակատարության աստիճանը. «Հայաստանը և Վրաստանը,— գրել է նա,— մեր դարաշրջանի արդեն վաղ դարերում ունեին իրենց գրչությունը, որը պահպանվել է մինչև մեր ժամանակները, չնայած այդ երկրներն ամայացնող բարբարոսական ներխուժումներին: Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի Երևանի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) ժողովարժուն աշխարհում առաջին տեղն է գրավում հայկական ձեռագրերի առաջինը»:

² М. Н. Тихомиров, Древнерусские города, М., 1956, с. 293.

³ М. Н. Тихомиров, Русская культура X—XVIII вв., М., 1968, с. 118—119.

⁴ М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV—XV вв., М., 1957, с. 216, 132, 133.

թյամբ ու արժեքավորությամբ, շնայած հայկական ձեռագրերը պահվում են նաև մի քանի արտասահմանյան գրադարաններում»⁵:

Մ. Տիխոմիրովի արխիվային ֆոնդում կան Մատենադարանում պահվող ձեռագրերից արված քաղվածքներ (պ. մ. 1527՝ լ. հաշիկյանի ինքնադիրը, պ. մ. 2966՝ մեքենագիր): XII—XIV դարերին վերաբերող այդ պատառիկները՝ լրում գրքերի մասին խոսվում է որպես «Ռուսական երկրին սրբազան նվերի՝ Սիրնի պատանիներին լուսավորելու համար», ինչպես նաև բյուզանդացիների կողմից հայերին հետապնդելու կապակցությամբ խորհուրդ է տրվում (այլոց հետ միասին) հաղորդել «ուղղափառ ռուսական եկեղեցուն՝ նրանցից պատշաճ օգնություն խնդրելով»⁶: Այս երկու պատառիկներն էլ վկայում են այդ հեռավոր ժամանակներում Ռուսաստանի հետ Հայաստանի բազմակողմանի կապերի մասին:

1952 թ. Մ. Տիխոմիրովը սկսեց լրջորեն զբաղվել գրքերի կազմածածկը գրքին միացնող կրկնաթերթերում հայտնաբերված սլավոնական ձեռագիր պատառիկների ուսումնասիրությամբ: Մ. Տիխոմիրովն ակներևաբար պատրաստվում էր հրապարակել այդ աղբյուրները, քանի որ ֆոտոպատճենահանել էր 39 թերթ, որոնք այդպես էլ պահվում են նրա ֆոնդում⁷: Սակայն նա հույված հրատարակեց այդ պատառիկների մասին: Այդ պատառիկների ճակատագիրը և Հայաստանում դրանց առկայությունը նա բացատրել է հետևյալ կերպ. հայկական գրիչները, «որոնց աշխատանքի պտուղները մեր ժամանակներն են հասել միջնադարյան Հայաստանի բարգավաճման տարիներին և թուրքական ու պարսկական տիրողների լծի տակ հայ ժողովրդի տառապանքների ծանր տարիներին գրված շքեղ և համեստ ձեռագրերի տեսքով», հոգ էին տանում ինչպես ձեռագրերի արտաքինի բովանդակության, այնպես էլ դրանց պահպանության մասին: Ամրության համար կազմարարները որպես կազմածածկ գրքին միացնող կրկնաթերթեր ղնում էին մագաղաթյա ձեռագրերի, այդ թվում սլավոնական, պատառիկներ⁸: Հայաստանում այդ պատառիկների առկայությունը Մ. Տիխոմիրովը բացատրում էր խոր հնուց հայերի և ռուսների սերտ շփումներով. հայկական գրիչներն այդ ձեռագրերը ձեռք էին բերում տարբեր ուղիներով (նվեր էին ստանում, գնում էին, բերում էին և այլն): Մ. Տիխոմիրովը դրանցից առավել հետաքրքրական էր համարում XVIII դ. ալպես կոչված հուշատետրը, որում գրված էին թվեր, մի քանի այբուբենների՝ պարսկականի, լատինականի, հայկականի, կիրիլյանի օգտագործումով: Նրանում ռուսերեն բանաստեղծությունը գրված է հայերեն ստեղծումով, գրառումներ են արված ռուսական պատմության մասին և այլն: Ակներևաբար նրա տերը եղել է հաճախ Հայաստանում լինող և հայկական գրչության տիրապետել ցանկացող մի մարդ: Մ. Տիխոմիրովի կարծիքով հայկական ձեռագրերում սլավոնական պատառիկների առկայությունը բացում է «հետաքրքիր էջ՝ սլավոնական ժողովուրդների մշակույթների և հայկական մշակույթի փոխադրեցության մարզում»⁹: Այդ պատառիկների նկարագրության մեջ գիտնականը մտցնում էր հետևյալ ցուցանիշները. ձեռագրի անվանումը, համարը, դարը կամ տարին, շափր, գրվելու տեղը, կաղմի ձևը և ապա, եթե սովյալ պատառիկը թույլ է տալիս, տեղեկություններ է հաղորդում տեքստի բովանդակության մասին: Այսպես, տեքստաբանական և հնագրական բարդ վերլուծության միջոցով նրան հաջողվեց պարզել, որ ձեռագրերից մեկը գրվել է 1352 թ. Կաֆայում (Ղրիմ, Թեոդոսիա), մյուսը ստեղծվել է լիտվական մեծ իշխանի գրասենյակում և այլն:

⁵ Академик М. И. Тихомиров, Об охране и изучении письменных богатств нашей страны («Вопросы истории», 1961, № 4, с. 63—64).

⁶ ՄԱՄ ԳԱ արխիվ, ֆ. 693, ք. 1. պ. մ. 142, թ. 9, 11:

⁷ Նույն տեղում, պ. մ. 159, թ. 1—39:

⁸ М. И. Тихомиров, Отрывки славянских рукописей в Матенадаране («Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 235—236):

⁹ Նույն տեղում:

ՍՍՀՄ ԳԱ արխիվի գործերից մեկում կա պատմության ինստիտուտի գի-
րեկտոր Բ. Գրեկովի անունով Մ. Տիխոմիրովին ուղղված շնորհակալություն,
որում ասվում էր, որ 1952 թ. մայիսին Մ. Տիխոմիրովն աշխատել է Ներսեսում:
Այնտեղ կարգում ենք, որ գիտնականն «առաջին անգամ ուսումնասիրել է
Մատենադարանում պահվող հին սլավոններեն լեզվով ձևագրերի պատառիկ-
ները և կազմել է այդ պատառիկների համառոտ բնութագրումները»։ Այսպի-
սով, Մ. Տիխոմիրովն այդ նյութերը ոչ միայն օգտագործել է իր աշխատանքի
համար, այլև ձգտել է Մատենադարանին օգնել այդ ձևագրերի վերծանման և
նկարագրման գործում¹⁰։

Բոլոր ուսումնական ձեռնարկներում և ընդհանրացնող հետադոտություն-
ներում, որոնք դուրս են եկել կամ Մ. Տիխոմիրովի գրչի տակից, կամ էլ հրա-
պարակվել են նրա նախաձեռնությամբ, կամ էլ խմբագրությամբ, նյութեր են
ներկայացված ինչպես Հայաստանի, այնպես էլ մյուս սովետական հանրա-
պետությունների պատմության, պատմագրության և աղբյուրագիտության
մասին։ Դրանցից են ոչ պատմագիտական բուհերի համար ՍՍՀՄ պատմու-
թյան դասագիրքը (Ս. Դմիտրիևի հեղինակակցությամբ), «ՍՍՀՄ պատմու-
թյան աղբյուրագիտություն» ուսումնական ձեռնարկը, որն առաջին անգամ
լույս է տեսել 1940 թ. և վերահրատարակվել 1962 թ., «ՍՍՀՄ ժողովուրդների
պատմության քրեստոմատի» (Մոսկվա, 1960), «ՍՍՀՄ-ում պատմական
գիտության պատմության ուղիվներ» բազմահատոր շարքի առաջին հատորը
(Մոսկվա, 1954) և այլն։ «ՍՍՀՄ պատմության աղբյուրագիտության» մեջ թե-
կուզ և կարճառոտ ձևով երկրի բոլոր բուհերում գիտական շրջանառության մեջ
ընկնելիս Հայաստանի պատմության աղբյուրները (գլուխ II, § 6, գլուխ VI,
§ I, գլուխ XVIII, § 2)։ Այդ բաժինները գրելու համար հեղինակը ընդգրկել է
ինչպես վավերագրական, այնպես էլ ձևագրի փաստաթղթեր, որոնք գետնը-
ված են այնպիսի հրատարակություններում, ինչպիսիք են «Հայ ժողովրդի
պատմության լուսաբանման վավերագրերի ժողովածուն» (մաս I, Մոսկվա,
1833), Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (Մոսկվա, 1893), «Հայ-
ոտական հարաբերություններ XVII դարում» (Ներսես, 1953) և այլն։ Այդ
բաժիններում Մ. Տիխոմիրովը գրել է հայկական աղբյուրների արժեքավորու-
թյան հարցը. «Կովկասի պատմության համար,— գրել է նա,— մեծ արժեք
ունեն հայկական պատմիչների աշխատությունները»¹¹։

Առանձին ժողովուրդների պատմության բաժինները գրելու համար Մ. Տի-
խոմիրովը հաճախ էր ներգրավում հանրապետությունների գիտական ուժերին։
Այսպես օրինակ, որպես «ՍՍՀՄ-ում պատմական գիտության պատմության
ուղիվներ» (Մոսկվա, 1955) Հայաստանի պատմագրության պարագրաֆ-
ների հեղինակներ նա հրավիրեց Լ. Խաչիկյանին (V դ.—XVIII դ. ներառյալ)
և Վ. Պարսամյանին (XIX դ. առաջին կես)։

Հայաստանի շատ գիտնականների հետ Մ. Տիխոմիրովը կապված էր գի-
տական և բարեկամական կապերով։ Նա ղեկավարել է Վ. Ոսկանյանի թեկնա-
ծուական դիսերտացիան, «Հնագրագիտական տարեգրքում» հրատարակել է
Վ. Միքայելյանի հոդվածը, գրական է գնահատել Պ. Հարությունյանի «Հայ
ժողովրդի աղատագրական պայքարը XVIII դարի առաջին բառորդում» գիրքը,
որը ներկայացվել էր ՍՍՀՄ ԳԱ նախագահության մրցանակին (1955 թ. հա-
մար)¹²։

Խնդրո առարկա հարցի ուսումնասիրության աղերսով կարևոր նշանակու-
թյուն ունի ակադեմիկոս Մ. Տիխոմիրովի և սկզբում Մատենադարանի աշխա-
տակից, հետագայում նրա գիրեկտոր, ՀՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանի
նամակագրությունը։ Նկատենք, որ նամակագրությունը, որպես սկզբնաղբյուր,

¹⁰ ՍՍՀՄ ԳԱ արխիվ, ֆ. 693, ց. 3, պ. մ. 26, թ. 1։

¹¹ М. Н. Тихомиров, Источниковедение истории СССР, вып. I. С древней-
ших времен до конца XVIII века, М., 1962, с. 26.

¹² ՍՍՀՄ ԳԱ արխիվ, ֆ. 457, ց. 1, պ. մ. 454, թ. 1։

դեռևս անբավարար է օգտագործվում պատմագիտական հետազոտություններում: Մինչդեռ, այն հնարավորություն է ընձեռում դատելու գիտնականների կողմից առանձին պորթլեմների մշակման ընթացքի, ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում գիտության կադմակերպման և գիտնականների բարեկամական ու գիտական կապերի մասին: ՍՍՀՄ ԳԱ արխիվում պահպանվել են Մ. Տիխոմիրովին և Խաչիկյանի գրած նամակների 27 թերթեր¹³, ինչպես արդեն նշվեց, և Խաչիկյանի ընտանեկան արխիվում կա Մ. Տիխոմիրովից ստացված 7 նամակ: Այստեղ կան նաև 1—4 էջանոց երկար նամակներ, և՛ կարճ գործարար գրություններ, և՛ շնորհավորական բացիկներ և այլն: Դրանց նշանակությունը համարժեք չէ, այդուհանդերձ, դրանք պատմագիտական փաստ են և այդ տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Երկու գիտնականների նամակագրությունից երևում է, որ Մ. Տիխոմիրովը 1958 թ. ապրիլին և Խաչիկյանին առաջարկել է «ՍՍՀՄ պատմության պատրաստվող քրեատոմատիայի» (մինչև XV դ. վերջը) համար հինգ սպագիր մամուլ ծավալով ընտրել Հայաստանի պատմության աղբյուրները նա գրել է. «Ավելի լավ է առլ մեծ հատվածներ աղբյուրներից և մանր փաստաթղթեր՝ հրովարտական, 2—4 էջանոց ամբողջական գրառումներ՝ ծանոթագրություններով և ոչ մեծ բացատրություններով, թե նա ինչ հեղինակ է և ինչ փաստաթուղթ է» և Խ. Խաչիկյանը պատասխանել է, որ համաձայն է նա Մ. Տիխոմիրովին ուղարկել է պատրաստվող «ՍՍՀՄ ժողովուրդների պատմության պատմաաշխարհագրական անվանումների ուսական տառադարձության բառացանկի» համար անհրաժեշտ «Հայաստանի պատմության պատմաաշխարհագրական անվանումների ցուցակը», ինչպես նաև Մ. Տիխոմիրովին հետաքրքրող մի քանի գրքեր՝ Հայաստանի փիլիսոփայության ու գեղանկարչության մասին¹⁴, Պատասխան նամակում Մ. Տիխոմիրովը զոհունակություն է հայտնել, որ «Քրեատոմատիայում հայկական աղբյուրները ներկայացված են լինելու բավականին ծանրակշիռ» (Մ. Տիխոմիրովի նամակը և Խաչիկյանին՝ 1958 թ. ապրիլի 15—20-ը): Մ. Տիխոմիրովն այդ նամակում էլ խոստացել է հետևել համեմատության մեջ անհրաժեշտ ուղղումներ մտցնելուն:

Արդեն 1961 թ. հունվարին Մ. Տիխոմիրովը Երևան է ուղարկել հրատարակված գրքի օրինակը՝ հայ գիտնականների հասցեին խորին շնորհակալությամբ (Մ. Տիխոմիրովի 1961 թ. հունվարի 20-ի նամակը՝ և Խաչիկյանին):

Ժամանակին և Խաչիկյանը բացատրական մեծ հոդվածով և ծանոթագրություններով լույս է բնծայել հայերեն ձեռագրերի XIV—XV դդ. հիշատակարանները: Այդ աշխատանքի համար նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Մ. Տիխոմիրովը Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի հասցեով կարծիք է ուղարկել դրա մասին (Մ. Տիխոմիրովի 1959 թ. հունիսի 4-ի նամակը և Խաչիկյանին):

Մ. Տիխոմիրովը նամակներում և Խաչիկյանի հետ կիսվում է սլավոնական և հունական ձեռագրերի համահամաք քարտարանի հրատարակման շուրջ իր պլանների մասին, հաղորդում է իր միջազգային դործունեության (ուլեոթություններ Հունաստան և Շվեդիա, Ելույթ անգլո-սովետական դիտադոկտում) մասին և Խաչիկյանն իր հերթին Մ. Տիխոմիրովին տեղեկացնում է Մատենադարանի աշխատանքների և պլանների մասին. օրինակ «նոր շքեղ շենք» տեղափոխվելու մասին, «որտեղ կան բոլոր անհրաժեշտ պայմանները՝ գիտական աշխատանք կատարելու համար», «Հայկական ձեռագրերի զլխավոր կատարող» կազմելու, «Բանբեր Մատենադարանի» համարների լույս տեսնելու, «Մատենադարանի պարսկերեն հրովարտականներ», Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը», «Հայերեն ձեռագիր հիշատակարաններ (1451—1480 թթ.)» հրատարակվելու մասին և այլն:

¹³ Նույն տեղում, ֆ. 693, ց. 4, պ. մ. 645, թ. 1—27:

¹⁴ Նույն տեղում, թ. 1, 3, 5:

1959 թ. ի. հաշիկյանն ուրախությամբ Մ. Տիխոմիրովին հայտնեց Մատենադարանը հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի վերածվելու մասին։ Նա գրում էր, որ «հնագրական աշխատանքների ծավալը... նշանակալիորեն կավելանա և արժեքավոր հայկական աղբյուրները կհրատարակվեն ակադեմիական հրատարակություններում՝ հայերեն և ռուսերեն լեզուներով»¹⁵։ Մ. Տիխոմիրովը Մատենադարանի կոլեկտիվին շնորհավորեց այդ կարևոր իրադարձության առթիվ։

Լ. հաշիկյանը Մ. Տիխոմիրովին տեղյակ էր պահում նրևանում անցկացվող գիտաժողովների մասին։ Այսպես, օրինակ, նա գրել է հայ-ուկրաինական կապերին նվիրված սեսիայի մասին, որտեղ «կարդացվել են մի շարք հետաքրքիր զեկուցումներ՝ Ուկրաինայում հին հայկական բնակավայրերի վերաբերյալ։ Սեսիան ընթացավ հաջողությամբ և գիտական հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջ բերեց»¹⁶։ Նրկու գիտնականների մեջ գործարար նամակագրություն է տեղի ունեցել ուկրաինական նշանավոր քաղաք-թանգարան Կամենեց-Պոդոլսկի թվագրման հարցի կապակցությամբ։ Մ. Տիխոմիրովին այդ հարցը շատ էր հետաքրքրում, և նա ինքը եղել էր այնտեղ։ Լ. հաշիկյանը նրան հաղորդել է երկու պատմաբանների Կամենեց-Պոդոլսկ կատարած այցելությունների մասին։ Նրանց հաջողվել էր հայտնաբերել և Հայաստան բերել փաստաթղթեր, որոնք պարունակում էին «բազմաթիվ հետաքրքիր նյութեր՝ Կամենիցի հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական և մատամբ քաղաքական դրություն մասին»։ Այնուհետև նա գրել է, որ հայերը «XII դարի վերջում... իրենց գաղութն են ունեցել Կիևում, իսկ այնտեղից փոխադրվել են Պոդոլյե, բայց թե երբ էր դա տեղի ունեցել, դժվար է ենթադրել»։ Լ. հաշիկյանը Մ. Տիխոմիրովին էր ուղարկում Մատենադարանի հրատարակությունները։ Այն մասին, թե Մ. Տիխոմիրովը ինչպես է դրանք գնահատել, կարելի է դատել Լ. հաշիկյանի նամակներից մեկի հետևյալ դարձվածքից. «Շուրջ մեկ մեր հրատարակություններին Ձեր տված բարձր գնահատականով»։

Նրկու գիտնականների նամակագրության մեջ լուսաբանվում էին ոչ միայն պորժնական հարցեր՝ կապված նրանց գիտական և կազմակերպչական աշխատանքի հետ, այլև դրանում արտացոլվում էին միմյանց նկատմամբ նրանց տածած ջերմությունն ու հոգատարությունը¹⁷։ Մեծ ջերմությամբ է լցված, օրինակ, Մ. Տիխոմիրովի այն նամակը, որը նա նրևան էր ուղարկել 1963 թ. հունիսի 21-ին՝ ի պատասխան իր 70-ամյակի առթիվ շնորհավորանքի։ Նա Լ. հաշիկյանին գրել է. «Սրտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և Մատենադարանի կոլեկտիվին՝ շնորհավորանքի և ջերմ բարեմաղթությունների համար. դրանք ինձ հատկապես թանկ են, իբրև բարեկամ կոլեկտիվի բարեմաղթություններ, որը զբաղվում է ձեռագրեր հավաքելով և պահպանելով»։

Թե Մ. Տիխոմիրովի վրա ինչպիսի անջնջելի տպավորություններ են թողել Հայաստան կատարած այցելությունները և ծանոթությունը նրա պատմության և հուշարձանների հետ, վկայում է Օշական գյուղում հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին կատարած այցելության ազդեցության տակ նրա գրած բանաստեղծությունը.

У могилы Маштоца

Этот склеп и печален и тесен,

В нем живет непроглядная мгла,

И зеленая древняя плесень

Кое-где по углам залегла.

¹⁵ Նույն տեղում, թ. 1—3, 5 հազ., 8:

¹⁶ Նույն տեղում, թ. 12:

¹⁷ Նույն տեղում, թ. 22:

Но узнай! Вместе с бедной могилой
 Ты народом своим не забыт,
 Многомощною вечною силой
 Твое имя на свете звучит.
 Оглянись! После долгих столетий
 Оживает родная страна,
 В каждой школе армянские дети
 Повторяют твои письма
 Прежде был твой народ обездолен,
 Даже к радости не было сил,
 А теперь он и счастлив и волен,
 Но и в счастье тебя не забыл¹⁸.

АКАДЕМИК М. Н. ТИХОМИРОВ И АРМЕНИЯ

ЕЛЕНА ЧИСТЯКОВА (Москва)

Резюме

М. Н. Тихомиров посетил почти все республики Советского Союза. Будучи академиком-секретарем отделения истории, он выступал с докладами по проблемам организации науки, проводил научные сессии и др.

Тесные связи поддерживал М. Н. Тихомиров с историками Армении, которую он неоднократно посещал. Он высоко ценил рукописное наследие армянского народа, занялся изучением отрывков славянских рукописей, обнаруженных в форзацах книжных переплетов армянских рукописей. Определенный интерес представляет его переписка с академиком АН Армянской ССР Л. С. Хачицянком.

¹⁸ Նույն տեղում, սյ. մ. 201, ց. 1, թ. 44: Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-րանսի-րական հանդեսում» (1965, № 4, էջ 291): Ինքնագիր-կրկնօրինակը պահվում է նաև Խաչիկյանների ընտանեկան արխիվում: Էջի ներքևում Մ. Տիխոմիրովի ձեռքով գրված է. «Գրվել է 1953 թ.»: